Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 հոկտեմբերի, 2021)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ,
եւ ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ»
(Մարկ. ԺԱ. 28):

Սիրելի՛ ներկաներ Ս. Պատարագի,

Այսօր Ս. Մարկոս ավետարանչի միջոցով մտովի կրկին տեղափոխվում ենք սուրբ քաղաք՝ Երուսաղեմ, ուր մեր Տերն Իր հաղթական մուտքից հետո ապրում է երկրային կյանքի վերջին եւ կարեւոր օրերը: Բոլորի ուշադրությունը սեւեռված է հենց Նրա վրա, իսկ շատերին հուզող եւ մտատանջող հարցը նույնն է՝ ո՞վ է այս մարդը. խոստացված Փրկիչը, Աստծու Որդին, մարգարե՞, օրենքի ուսուցի՞չ... Կաղերը քայլում են, կույրերը՝ տեսնում, համրերը՝ խոսում, անդամալույծները՝ առողջանում, անգամ դեւերն են հնազանդվում Նրան: Օդում կախված տագնապն ու անորոշությունն էլ ավելի են խտացնում մարդկային կյանքի գույները, իսկ սպասումը դառնում է անտանելի: Եւ այս ամենի կիզակետում Հիսուս Փրկիչն է՝ մարմնացյալ Աստված, որ աշխարհ էր եկել մեր փրկության համար: Նրա խոսքն այլ էր, գործելակերպը՝ նույնպես. «Ժողովուրդը զարմացած էր Նրա ուսուցման վրա, որովհետեւ ուսուցանում էր մեկը, որ իշխանություն ունի, եւ ոչ թե դպիրների նման» (Մատթ. է. 28–29): Անկախ բոլոր հանգամանքներից՝ շատերն էին ցանկանում ճանաչել Նրան ու հաղորդ դառնալ իրական ճշմարտությանը:

Եւ ահա մեր աչքի առաջ հառնում է չտեսնված մի տեսարան: Հիսուս մտնում է Երուսաղեմի տաճար եւ այնտեղից վռնդում վաճառողներին, լումայափոխներին ու աղավնեվաճառներին: Ավելին՝ Տերը եւս մեկ անգամ ի լուր ամենքի խոսում է տաճարի բուն նշանակության մասին. «Իմ

տունը բոլոր ազգերի համար աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք այն ավազակների որջերի եք վերածել» (Մարկ. ԺԱ. 17)։ Սովորական մարդիկ ապշած էին Հիսուսի այս արարքից, քանզի նրանց համար արդեն նորմալ երեւույթ էր դարձել մարդկանց այդ խմբերին տեսնել տաճարում։ Ի տարբերություն ժողովրդի՝ քահանայապետներն ու դպիրները հնար էին փնտրում Տիրոջը կորստյան մատնելու համար։ Ուստի մոտեցան Նրան եւ առաջին հայացքից պարզ թվացող մի հարց տվեցին. «Ի՞նչ իշխանությամբ ես անում այս բաները, եւ ո՞վ քեզ տվեց այդ իշխանությունը» (Մատթ. Է. 28–29)։ Չէ՞ որ Նա ո՛չ ուսուցիչ էր, ո՛չ ձեռնադրված քահանա կամ Աստծուց ուղարկված մարգարե... Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել Նրա պահվածքը։

Սանհեդրինի անդամների նպատակը հասկանալի էր՝ ծուղակը գցել Հիսուսին եւ հիմնավոր փաստ ունենալ Նրան ձերբակալելու համար։ Եթե Հիսուս ասեր, որ այդ ամենն անում է Իր իշխանությամբ, ապա Նրան կարող էին ձերբակալել մեծամտության պատճառով։ Իսկ եթե պնդեր, որ Աստծուց ստացած իշխանությամբ է գործում, ապա կմեղադրվեր աստվածհայհոյության մեջ։ Ի զարմանս շատերի՝ մեր Տերը նրանց հարցին հարցով է պատասխանում եւ հարց տվողներին ավելի վատ վիճակի մեջ գցում. «Ես էլ ձեզ մի բան հարցնեմ, պատասխա՛ն տվեք Ինձ, եւ Ես կասեմ ձեզ, թե ի՞նչ իշխանությամբ եմ անում այս բաները։ Հովհաննեսի մկրտությունը երկնքի՞ց էր, թե՞ մարդկանցից» (Մատթ. Է. 28–29)։ Եթե նրանք ասեին, որ Ս. Հովհաննես Մկրտչի մկրտությունը երկնքից էր կամ այլ կերպ՝ աստվածային նախախնամությամբ, ապա ստիպված կլինեին հակահարցին էլ պատասխանել՝ այդ դեպքում ինչո՞ւ չընդունեցին եւ չհավատացին նրան։ Երկնքից չլինելու մտածումը հրեական բարձրագույն իշխանության անդամներին մեկ այլ դժվարության առաջ էր կանգնեցնելու։ Նրանք իրենց ոչ խելամիտ քայլով կհակադրվեին հասարակական կարծիքին, քանզի մարդիկ Զաքարիայի որդի Հովհաննեսին իբրեւ մարգարե էին ընդունում։ Մկրտությունը՝ մարդկանցից լինելու հանգամանքն էլ դյուրին չէր խոստովանել, քանզի վախենում էին քարկոծվելուց եւ մարդկանց բարկությունից։ Բացի այդ՝ նրանք քաջ գիտեին, որ նույն Հովհաննեսը բազմիցս վկայել էր Հիսուսի մասին. «Ինձնից հետո գալիս է ինձնից ավելի հզոր մեկը, որի առաջ խոնարհվելով՝ Նրա կոշիկների կապերն անգամ արձակելու արժանի չեմ։ Ես ձեզ ջրով մկրտեցի, բայց Նա ձեզ Ս. Հոգով կմկրտի» (Մարկ. Ա. 7–8), «Ահա Աստծու Գառը,

որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա. 29)։ Հիսուսի ընդդիմախոսները, հասկանալով իրավիճակի եւ պահի լրջությունը, խոստովանեցին, որ իրենք էլ պատասխանը չգիտեն։ Ուստի Հիսուս անպատասխան թողեց նրանց հարցը՝ հավելելով. «Ես էլ ձեզ չեմ ասի, թե ի՛նչ իշխանությամբ եմ անում այս բաները» (Մարկ. ԺԱ. 33)։

Գաղտնիք չէ, որ իշխանության ձգտումը, դրանից անձնական օգուտներ քաղելը, բարեկեցիկ կյանքով ապրելն ու մարդկանց վրա իշխելու ցանկությունը շատ մարդկանց երազանքն են եւ կյանքի իմաստը։ Ուշադիր նայե՛ք մեր հասարակության պահվածքին եւ կհամոզվեք, որ շատերը պատրաստ են ամեն ինչի՝ հանուն իշխանության, պաշտոնի կամ փողի։ Այսպիսիների համար չկան սահմաններ կամ օրենքներ, ապրում են այնպես, ասես մեկ օր հոգի չեն տալու։ Երբ իշխանություն են ստանում նման մարդիկ, իսկույն սկսում են հպարտանալ, իրենց մյուսներից ավելի վեր դասել, այլեւս չեն ցանկանում շփվել նախկին ընկերների եւ մտերիմների հետ՝ չհասկանալով, որ մեղքի ճիրաններում են։ Իշխանատենչության մոլուցքը նրանց կտրում է նաեւ իրենց անցյալից ու ապրած կյանքից։ Մեղքը ոչ միայն կուրացնում է նրանց, այլեւ մեղսալից դարձնում նաեւ նրանց հետ շփվողների կյանքը։ Բայց նույն կյանքը ցույց է տվել, որ նրանք որքան արագ բարձրանում են իշխանության աստիճանակարգում, նույնքան էլ, թերեւս, ավելի արագ գահավիժում են եւ հայտնվում միայնության մեջ։ Եվ այդժամ ոմանք հասկանում են, որ սխալ պատկերացում են ունեցել իշխանության մասին։

Ցավոք, իշխանություն ունենալը մեծ մասամբ ընկալվում է պատեհ միջոց հինականում անձնական հարստացման համար, ուր հաճախ բացակայում են խիղճն ու բարոյական օրենքները, իսկ աստվածային պատվիրանների մասին խոսելն անգամ անիմաստ է։ Այս պահին ունես իշխանություն, ուրեմն քեզ ամեն ինչ կարելի է եւ թույլատրելի։ Արա՛ սրտիդ ուզածը, քանի դեռ հնարավորություն ունես։ Սա անխելք եւ կարճ մտածողության տեր մարդու պահվածք է։ Այնինչ հակառակը պիտի լիներ. իշխանությունը գործածել հանուն բարիքի՝ մերձավորին օգնելու եւ երկնքում գանձեր դիզելու համար. «Ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգն են փչացնում, որտեղ գողերը սողոսկում եւ գողանում են, այլ ձեզ համար գանձեր դիզե՛ք երկնքում, որտեղ ո՛չ ցեցը, ո՛չ ժանգը չեն փչացնում, ո՛չ էլ գողերն են սողոսկում եւ գողանում. որովհետեւ որտեղ ձեր գանձերն են, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն» (Մատթ. Զ. 19–21)։

Սիրելինե՛ր, մոռանում ենք մի պարզ ճշմարտություն, որ իշխանություն ունենալը նախեւառաջ պատասխանատվություն է, պատասխանատվություն սեփական անձիդ եւ այն բոլոր մարդկանց համար, որոնք իշխանությանդ ներքո են։ Հետեւաբար սխալներ գործելիս վնասում ես ոչ միայն քեզ անձնապես, այլեւ նրանց, որոնց վրա առաջնորդ ես կարգված։ Սա չի նշանակում, որ խոտելի կամ դատապարտելի են իշխանության ձգտումն ու այն ունենալը։ Ի վերջո՝ իշխանությունը լավ հնարավորություն է աստվածահաճո ծրագրեր իրականացնելու, մարդկանց կյանքն ավելի լավացնելու եւ բարություն սփռելու համար։ Բայց միանշանակ դատապարտելի է այն իշխանությունը, որը միտված է անձնական կյանքի կամ ընտանիքի անդամների, մտերիմների, ընկերների կամ հարազատների բարգավաճմանը եւ օգտին։ Նման իշխանությունը դառնում է չարիք հասարակության համար։

Իշխանության մասին թվարկածս բոլոր ձեւերից տարբեր էր մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի իշխանությունը։ Այն աստվածային եւ անպայմանավոր սիրո իշխանություն էր, որ դիպչում էր յուրաքանչյուրի սրտին եւ հոգուն՝ այլակերպելով այդ մարդուն։ Եթե երկրային իշխանավորներն իշխում են մարդկանց վրա իրենց դիրքից եւ հանգամանքից ելնելով, ապա Հիսուս ամեն ինչ անում էր սիրով, գթասրտությամբ եւ բարությամբ։ Քանզի անսահման է մեր հանդեպ Աստծու սերը, այն հնարավոր չէ չափել, այլ պետք է միայն զգալ եւ ապրել։ Հիսուսի իշխանությունը մարդուն փոխում է, ավելի լավը դարձնում եւ մոտեցնում արարչադիր նախկին պատկերին ու նմանությանը։ Մնում է՝ մենք մեր սրտերը բացենք Տիրոջ առաջ եւ նրան հրավիրենք այնտեղ թագավորելու։ Իրավամբ ճշմարիտ է ասված. «Հիսուս ծառաներ չուներ, բայց Նրան Տեր էին կոչում։ Նա գիտական աստիճան չուներ, բայց Նրան Ուսուցիչ էին կոչում։ Նա դեղորայք չուներ, բայց Նրան Բժիշկ էին կոչում։ Նա բանակ չուներ, բայց թագավորները վախենում էին Նրանից։ Նա երբեք չպատերազմեց, բայց հաղթեց աշխարհին։ Նա չապրեց ամրոցում, բայց Նրան Տեր կոչեցին։ Նա չկառավարեց ազգերի, բայց Նրան Թագավոր կոչեցին։ Նա հանցանք չգործեց, բայց խաչեցին Նրան։ Նա թաղվեց գերեզմանում, բայց ապրում է այսօր»։

Թող մեր Տիրոջ անզրաւ սիրո իշխանությունն ամենքիս հասնի, մեզ գոտեպնդի եւ զորացնի՝ այս կյանքն արժանավայել ապրելու եւ երկնքի արքայության ժառանգորդ դառնալու համար։